ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

5 հունիսի հինգշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

73
(3104)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՍԻՄՈՆՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆԸ ՍԵՓԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏ Է ԽԱՌՆԵԼ

[24] Մատակարարվող (առաքվող) ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկ

N	Ապրանքի անվանում	Չափման միավոր	Քանակ	Միավորի գին	Հոգ (%)	Արժեք	Տարա*	ԱԱՀ դրույքաչափ (%)	ԱԱՀ գումար	Գնահատքի անասակ	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Դեզոդորանտ նարդոսի եթերայուղով, 100մլ (411126)	Հատ	1	6416.67	20	5133.33		20	1026.67		6160
2	Հակատարիքային ձգող քսուք 50 մլ (4 07121)	Հատ	1	32333.33	30	22633.33		20	4526.67		27160
3	Հակատարիքային քսուք աչքի համա ր, 15 մլ (502251)	Հատ	1	27750	30	19425		20	3885		23310
4	Տոնավորող հեղուկ մաշկի բոլոր տես ակների համար, 100 մլ (502111)	Հատ	1	7416.67	20	5933.34		20	1186.67		7120.01
5	Տուփ քառակուսի, սպիտակ ծաղիկնե րով	Հատ	1	2500		2500		20	500		3000
Ընդամենը						55625		X	11125.01	X	66750.01

* Տարա սյունակը լրացվում է այն դեպքում, երբ տարան չի օտարվում:

Ալեն Սիմոնյանի ղեկավարած Ազգային ժողովը պետական բյուջեի հաշվին անհավանական գնումներ է անում. «Ժողովուրդ» օրաթերթի ձեռքում է հայտնվել փաստաթուղթ, համաձայն որի՝ 2025 թվականի մարտին Ազգային ժողովը գնել է հակատարիքային քսուքներ:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է փաստաթուղթ, ըստ որի՝Ազգային ժողովը «Նաիրիան» ՓԲԸ-ից երկկողմանի հաստատված փաստաթղթերով գնել է՝

1. դեզոդորանտ նարդոսի եթերայուղով
2. հակատարիքային ձգող քսուք
3. հակատարիքային քսուք աչքի համար
4. տոնավորող հեղուկ մաշկի բոլոր տեսակների համար
5. տուփ՝սպիտակ ծաղիկներով

Այս գնումների համար Ազգային ժողովը պետբյուջեի միջոցներից վճարել է 66.750 ՀՀ դրամ: Գումարը, անշուշտ, մեծ չէ, բայց անհասկանալի է, թե Ազգային ժողովի որ կարիքի համար է ձեռք բերվել հակատարիքային ձգող քսուք, ով է այն օգտագործում, կամ ում է Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը հակատարիքային քսուքը նվիրել:

Սա արդեն անգամ զավեշտալի չէ:

ԱԺ նախագահի մամուլի խոսնակը պարզաբանեց, որ այդ գնումն իրականացվել է եւ որպես նվեր փոխանցվել է պաշտոնական հանդիպումներից մեկի ժամանակ, նշելով, որ դիվանագիտական էթիկայից ելնելով՝ չի կարող ասել, թե կոնկրետ որ պաշտոնատար անձին է այն նվիրվել:

«Ձեր կողմից հիշատակված գնումը, այո, իրականացվել է: Եվ, ինչպես ընդունված է դիվանագիտական արարողակարգում, բարձրաստիճան պաշտոնյաները հանդիպումների ժամանակ փոխանակվում են նվերներով, ու այստեղ որեւէ արտառոց բան չկա: Հակառակը՝պետք է ուշադրություն դարձնենք, որ այն հայկական արտադրության է, ու այս ճանապարհով նաեւ նպաստում ենք հայկական արտադրության բրենդների ճանաչելիության բարձրացմանը: Տարբեր առիթներով նմանատիպ հայկական արտադրության տարբեր նվերներ ենք տալիս: Օրինակ՝հայկական չրեր, խմիչքներ, շարֆեր. սա էլ դրանցից հերթականն է ու արտառոց ոչինչ չկա», - նշել է ԱԺ նախագահի մամուլի քարտուղարը:

Ալեն Սիմոնյանը պետականը սեփական միջոցների հետ է խառնել եւ չի տալիս հաշվետվություն, թե ինչ է արել հակատարիքային քսուքները եւ ինչու է դրանք գնել պետբյուջեի միջոցներից, սակայն նա եռանդով քննադատում է նախկին կոռումպացված համակարգը՝ չխուսափելով անձամբ դառնալ կասկածելի գնումների եւ կոռուպցիոն գործարքների օբյեկտ. ասվածի վկայությունը հրապարակված փաստաթղթերն են:

Փաստաթղթերն ամբողջությամբ՝ ArmLur.am կայքում:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այսօր՝ հունիսի 5-ի երեկոյան, Հայաստան կժամանի Ռուսաստանի Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոն: Տեղեկացանք, որ Հայաստան կժամանի մեծ պատվիրակություն՝ երկու տասնյակից ավելի ներկայացուցիչներով, որոնց թվում կլինեն Ռուսաստանի Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի անդամները, փոխնախագահ, անգամ՝ երկու մարզպետ: Վալենտինա Մատվիենկոյի ղեկավարած պատվիրակությունը հունիսի 5-6-ը կմնա Երեւանի «Դվին» հյուրանոցում: Պատվիրակությունը կայցելելի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, այնուհետեւ «Մայր Հայաստանի» հուշահամալիր ու հանդիպումներ է ունենալու ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի ու ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ: Հիշեցնենք, որ Ալեն Սիմոնյանը դեռ մեկ տարի առաջ էր հայտարարել, որ ինքն անձամբ է ինքնաթիռի «բորտի տակից» գրկած դիմավորելու Մատվիենկոյին: Հավելենք, որ դեռեւս մարտին Ռուսաստանի Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոն պաշտոնական այցով մեկնել էր Ադրբեջան: Այցից հետո ՏԱՍՍ-ը նշել էր, որ Մատվիենկոն կայցելի Երեւան՝ «ռուս-հայկական միջպետական հարաբերություններին նոր լիցք հաղորդելու համար»: Հիշեցնենք, որ Մատվիենկոն եւ Ալեն Սիմոնյանը հեռահար կերպով կոշտ բանավեճի էին բռնվել, եւ սա այդ լարվածությունից հետո առաջին հանդիպումը կլինի:

Նիկոլ Փաշինյանի հիստերիկ վարքագծային դրսեւորումները ներթափանցել են Կառավարության անդամների մեջ. ասվածի ապացույցը ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի անառողջ գրառումն է՝ արված առավոտ կանուխ: Անհասկանալի է, թե ինչի ազդեցության տակ, բայց փաստ է, որ Անահիտ Ավանեսյանը ագրեսիվորեն հարձակվել է իր հայտարարագրի հրապարակումն իրականացրած լրատվամիջոցի վրա: Հիմա ներկայացնում ենք անհերքելի փաստեր, թե ինչպես է Անահիտ Ավանեսյանը, իր պաշտոնը ստանձնելու տարվա դրությամբ, կիսատ-պռատ լրացրել փաստաթղթերը: Նա չէր հայտարարագրել անշարժ գույք, չէր հիշատակել վերջին տարիներին հայտարարագրում հայտնված մեքենայի մասին: Ավանեսյանի դրամական միջոցները կազմել էին ընդամենը 1 մլն 950 հազար դրամ եւ 600 եվրո, իսկ տարեկան եկամուտները՝16 մլն 519 հազար դրամ: Այսինքն՝2018 թվականին Անահիտ Ավանեսյանը դատարկ թղթեր էր լրացրել, երբ փոխնախարար էր նշանակվել, քանի որ, համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների, ամբողջ կյանքի ընթացքում ունեցած գույքը հայտարարագրվում էր 2019 թվականից սկսած: Այ թե ինչի ազդեցության տակ է Ավանեսյանը գրել առավոտյան ստատուսը, հարցական է, քանի որ օրաթերթի կողմից կոնկրետ մեղադրանք չի հնչել նախարարի հասցեին, կեղծ փաստեր չեն հրապարակվել, նախարարն անգամ ինքը չգիտի, թե ինչն է ուզում՝հերքենք: Ի՞նչը հերքենք, որ 2018 թվականի հայտարարագիրը դատարկ չէ՞, բայց դատարկ է, որ գույք ձեռք չի՞ բերել, բայց գույք ունի: Օրաթերթը հենց դա՛ էլ գրել է:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այսօր Ազգային ժողովում 2024 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը ներկայացնելու է ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը: ՔՊ-ական մեր աղբյուրները փոխանցում են, որ Միրզոյանն իրենց թիմի այն եզակի անդամներից է, որ շատ քիչ է շփվում թիմի հետ, ու, կարելի է ասել, սա հնարավորություններից մեկն է՝նրան հարցեր ուղղելու: Մեր աղբյուրները նշում են նաեւ, որ Միրզոյանի «մի կողմ քաշվելը» թիմում տեւական ժամանակ է չեն հանդուրժում, քանի որ վերջինս, լինելով քաղաքական թիմում, սկանդալային տարբեր միջադեպերից հետո որեւէ ձեւով չի աջակցում իր գործընկերներին: Ի դեպ, նշենք, որ Արարատ Միրզոյանը անգամ հրաժարվել է ՔՊ վարչության անդամ լինելուց, որպեսզի որեւէ կերպ չխառնվի ՔՊ-ի ներսում կատարվող քննարկումներին կամ «խարդավանքներին»: ՔՊ-ամերձ մեր աղբյուրները նշում են նաեւ, որ Միրզոյանն իր կապերը խզել է անգամ վաղեմի ընկերների հետ, ոչ ոքի հետ որեւէ առնչություն չունի: ՔՊ-ականների համար Արարատ Միրզոյանը թիմային անդամ չի համարվում: Հիշեցնենք, որ նախօրեին գրել էինք, որ Արարատ Միրզոյանի ջանքերով «Էնթերփրայզ Արմենիա» բիզնես կենտրոնի տնօրեն է նշանակվել նրա կինը՝ Գոհար Աբաջյանը:

ՄԵԿՆԱԲԱՆԵԼՈՎ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԳՐԱԴՈՒՄՆԵՐԸ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆԸ ՀԱՄԱԿԱՐԾԻՔ Է

Վերջին օրերին վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից արված հակաեկեղեցական հայտարարությունների մասին ArmLur.am-ը զրուցել է ՔՊ-ական պատգամավոր Վահագն Ալեքսանյանի հետ:

-Պարոն Ալեքսանյան, 2018 թվականի հեղափոխությունից հետո Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ նախկին թալանչիներին պետք է պատժել: Ըստ էության՝ որեւէ մեկը չի պատժվել: Ինչու՞:

-Ինչպե՞ս չեն պատժվել: Պատժվել են:

-Կոնկրետ ո՞վ է պատժվել: Արդարացվում են բոլորը:

-Օրինակ՝ Սերժ Սարգսյանի եղբոր որդին բանտարկվել է, պետությանն էլ վերադարձվել է 500 միլիոն դոլար:

-Դուք խոսում եք 1, 2 հոգու մասին: Բայց, ըստ Նիկոլ Փաշինյանի, թալանչիների շարքը մեծ է:

-Խոսքը 500 միլիոն դոլարի մասին է: Ուզում եմ հիշեցնել, որ 2018 թվականի Հայաստանի ամբողջ պետական բյուջեն մոտ 2 մլրդ դոլար էր: Ստացվում է, որ 25 տոկոսի չափով գումար է վերադարձվել պետական բյուջե:

-Դուք գրեթե 8 տարի է իշխանության եք, գո՞հ եք ցուցանիշներից:

-500 միլիոնը վատ ցուցանիշ չէ: Մենք այդ մեխանիզմն այնպես ենք ներդրել, որ հետագայում ներում-բեկում չի լինելու:

-Պարոն Փաշինյանի խոսքով, երբ ինքը գնում է հանդիպումների բողոքներ է լսում թե՝ սա չեք արել, նա չեք արել: Ստացվում է, որ նաեւ ինքն է բողոքում, որ բազմաթիվ չարված գործեր կան, օրինակ, որ նախկինները չեն պատժվել:

-Այո, դա պետք է փաստել, որ մարդկանց միակ բողոքն է դա:

-Այսինքն, ըստ էության, ամբողջությամբ չի՞ հաջողվել:

-Միանշանակ, պրոցեսը դանդաղ է իրագործվում: Այն չի ընթանում այն արագությամբ, որը կգոհացներ ՀՀ քաղաքացիներին:

-Պարոն Ալեքսանյան, Նիկոլ Փաշինյանն ասաց, որ սատանաներ կան, եւ պետք է գտնել սատանաներին: Հիմա անցել է եկեղեցականներին, վերջիններիս սեռական կյանքի մասին հրապարակումներ են արվում, իսկ հաջորդը, պարոն Ալեքսանյան, ո՞վ է լինելու: «Եկեղեցականներ», «սատանաներ», «նախկիններ»... Թիրախում հաջորդն ո՞վ է լինելու:

-Ձեր նշած բոլորը 3-ը 1-ում են հանդես գալիս: Այսինքն՝ մենք ունենք այնպիսի կերպարներ, որոնք 3-ը մեկում համատեղում են՝ «սատանաներ», «եկեղեցականներ», «նախկիններ»: Կգտնվեն այլ ատրիբուտներ, որոնցով հարմար կլինի բնորոշել որոշ գործիչների:

-Որքանո՞վ է ճիշտ, երբ մարդկանց սեռական կյանքի մասին հրապարակումներ են լինում: Անհարիր ենք համարում վարչապետի խոսքը ցիտել, բայց որքանո՞վ է դա կոռեկտ:

-Եկեք ֆիքսենք, որ նրանք իրավունք չունեն սեռական կյանք ունենալու:

-Դուք 8 տարի է իշխանության եք, ինչո՞ւ նոր հիշեցիք այդ մասին:

-Իշխանությունն ի՞նչ կապ ունի: Այս թեման պարբերաբար բարձրացրել են թե՛ իշխանություն ունեցող, թե՛ իշխանություն չունեցող մարդիկ: Խնդիրն այն է, որ իրենք խախտել են Աստծուն տված ուխտը:

Զրուցեց ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ԱՎԻՆՅԱՆԸ ԿԳՆԱ ԱԺ

Ազգային ժողովը հաստատել է ԱԺ մշտական հանձնաժողովներում «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվության նախնական քննարկումների անցկացման ժամկետացանկը:

Ուրբաթ օրը Ազգային ժողով կգնա Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, նա հրավիրված է ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանի եւ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանի զեկույցները լսելու, ովքեր ներկայացնելու են ՀՀ 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ եկամուտները եւ ծախսերի կատարողականը:

Քաղաքապետ Ավինյանն Ազգային ժողովում կլինի նաեւ երկուշաբթի օրը եւ հունիսի 11-ին:

ՇՈՅԳՈՒՆ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԿԻՄ ՉԵՆ ԸՆԻ ՀԵՏ

Ռուսաստանի Անվտանգության խորհրդի քարտուղար Սերգեյ Շոյգուն ժամանել է Փհենյան՝ Հյուսիսային Կորեայի առաջնորդ Կիմ Չեն Ընի հետ հանդիպելու:

Շոյգուն Փհենյան է այցելել Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հանձնարարությամբ, հաղորդում է ՏԱՍՍ-ը: Երեք ամսվա ընթացքում սա նրա երկրորդ այցն է Փհենյան:

Ռուսաստանի Անվտանգության խորհրդի մամուլի ծառայությունը ՏԱՍՍ-ին հայտնել է, որ կողմերը, ինչպես սպասվում է, կքննարկեն «Ռուսաստանի եւ ԿԺԴՀ-ի միջեւ համապարփակ ռազմավարական գործընկերության մասին պայմանագրի որոշակի դրույթների կատարման, ինչպես նաեւ Կուրսկի մարզի ազատագրմանը մասնակցած կորեացի զինվորների հիշատակը հավերժացնելու ջանքերը»:

Բացի այդ, կողմերը կքննարկեն միջազգային օրակարգի հրատապ հարցեր, այդ թվում՝ Ուկրաինայի շուրջ ստեղծված իրավիճակը:

Շոյգուի նախորդ այցը Հյուսիսային Կորեա տեղի էր ունեցել մարտի 21-ին: Այդ ժամանակ նրան ընդունել էր Կիմ Չեն Ընը, եւ նրանց զրույցը տեւել էր մոտ երկու ժամ: Շոյգուն հայտնել էր, որ Պուտինի ուղերձը փոխանցել է Հյուսիսային Կորեայի առաջնորդին: Նրանք քննարկել են Ուկրաինան եւ Ռուսաստան-Ամերիկայի Միացյալ Նահանգներ երկխոսության մեկնարկը:

ԱԴՐԲԵՋԱՆԸ՝ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

ԴԱՐՁՅԱԼ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՆ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՄՆ-ում Ադրբեջանի դեսպան Խազար Իբրահիմը Diplomatic Watch ամսագրին տված հարցազրույցում հայտնել է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ Խաղաղության պայմանագրի նախագիծն արդեն պատրաստ է: Սակայն, ըստ նրա, մինչեւ վերջնական ստորագրումը կան մի շարք էական խնդիրներ, որոնք պետք է լուծվեն:

«Հուսով ենք, որ կկարողանանք այն ստորագրել, սակայն կան որոշ խորքային եւ էական հարցեր, որոնք պետք է լուծվեն նախքան ստորագրումը: Ադրբեջանն ունի շատ իրատեսական դիրքորոշում, որը սատարվում է միջազգային հանրության կողմից», - նշել է դեսպանը:

Ըստ նրա՝ հիմնական խնդիրներից մեկը Հայաստանի Սահմանադրության այն դրույթն է, որը «պարունակում է տարածքային պահանջներ Ադրբեջանի նկատմամբ»:

«Մենք կայուն խաղաղություն չենք ունենա, եթե վաղը խաղաղության պայմանագիր ստորագրենք, բայց սահմանադրությունը՝ երկրի հիմնական օրենքը չփոխվի: Հետեւաբար, Հայաստանի Սահմանադրության փոփոխությունը պարտադիր է», - ընդգծել է Իբրահիմը:

Դեսպանն անդրադարձել է նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի հարցին՝ նշելով, որ այն «հնացած է եւ անիրագործելի»: «Այն գոյություն ունի միայն թղթի վրա եւ կրում է խորհրդանշական բնույթ: Դրա լուծարումը ցույց կտա, որ հակամարտությունն իսկապես ավարտվել է», - ասել է նա:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ԽՈՍԵԼ Է ՈՐՈՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՑ

«Հանդիպումը տեղի է ունեցել, արդեն երկրորդ հանդիպումն է սա, որի ժամանակ քննարկվել է անհետ կորածների ճակատագիրը, հնարավոր որոնողական աշխատանքները եւ նմանատիպ բնույթի այլ հարցեր:

Այս մասին լրագրողների հետ զրույցում ասաց ԱԱԾ տնօրեն Արմեն Աբազյանը՝ անդրադառնալով հարցին, թե Հայաստանի եւ Ադրբեջանի անհայտ կորածների հարցերով զբաղվող հանձնաժողովների ներկայացուցիչների հանդիպմանը ինչ է քննարկվել:

Աբազյանը նշեց, որ նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ այդ աշխատանքները շարունակական լինեն:

«Հանդիպումը գնահատում եմ դրական: Ես գիտեմ, որ բոլորը սպասում են արդյունքների, մենք բոլորից շատ ենք շահագրգռված, որ օր առաջ արդյունք ունենանք: Ես չեմ կարող հստակ ասել, թե երբ արդյունք կունենանք, բայց արդյունք ունենալու ուղղությամբ ամեն ինչ արվում է»,- ասաց նա

Հարցին՝ երբ կմտնեք Արցախ որոնողական աշխատանքներ իրականացնելու համար, նա ասաց. «Ես չբարձրաձայնեմ, թե երբ կմտնենք, բայց նախնական համաձայնություն ունենք, որ համատեղ իրականացնելու ենք որոնողական աշխատանքներ»:

Ավելի վաղ հայտնել էինք, որ տեղի է ունեցել Հայաստանի եւ Ադրբեջանի անհայտ կորածների հարցերով զբաղվող հանձնաժողովների ներկայացուցիչների հանդիպում: Քննարկման ընթացքում կողմերն անդրադարձել են հակամարտության ընթացքում անհայտ կորած անձանց ճակատագրի պարզաբանմանն առնչվող հումանիտար հարցերին:

ՀԱԿԱՍՈՒՄ ԵՆ

Պայմանները, որոնք Միացյալ Նահանգներն առաջ է քաշել իրանական միջուկային ծրագրի շուրջ ճգնաժամի կարգավորման վերաբերյալ Իրանի հետ բանակցությունների ընթացքում, հակասում են իսլամական հանրապետության հիմնական սկզբունքներին: Այս մասին հայտարարել է Իրանի գերագույն առաջնորդ Այաթոլլա Ալի Խամենեին:

«Գլխավոր սկզբունքը, որը պաշտպանում է մեր շահերը, «մենք կարող ենք» սկզբունքն է:

Նույնիսկ Օմանի միջնորդությամբ միջուկային բանակցությունների վերջին դեպքում ԱՄՆ բոլոր առաջարկները 100%-ով հակասում են այդ սկզբունքին», - ընդգծել է նա Այաթոլլա Ռուհոլլա Խոմեյնիի մահվան 36-րդ տարելիցի կապակցությամբ իր ելույթում:

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՓՈՒԼԻ ՄԱՍԻՆ

ԷՐԴՈՂԱՆԻՆ ՎՍՏԱՀՈՒՄ ԵՆ Ե՛Վ ՌԴ-Ն, Ե՛Վ ՈՒԿՐԱԻՆԱՆ. Հ. ՖԻԴԱՆ

Թուրքիայի արտգործնախարար Հաքան Ֆիդանը երեքշաբթի հայտարարել է, որ սպասվում է Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ բանակցությունների նոր փուլ, քանի որ երկու կողմերն էլ ընդունում են երկխոսության կարեւորությունը:

TRT News-ին տված հարցազրույցում Ֆիդանը շեշտել է, որ պատերազմը, որը շարունակվում է արդեն չորս տարի, այլեւս երկու երկրների միջեւ չէ, այլ միջազգային ներգրավվածության պատճառով վերածվել է գլոբալ հակամարտության:

Նա նշել է, որ զինադադարի թափը մեծացել է Թրամփի վարչակազմի օրոք եւ հիշեցրել է Մոսկվա եւ Կիեւ իր կատարած բարձր մակարդակի այցերի մասին:

Ֆիդանը հավելել է, որ հունիսի 2-ի հանդիպումն անցել է դրական մթնոլորտում, որի արդյունքում ձեռք է բերվել ավելի քան 1000 մարդու ներգրավմամբ նոր գերիների փոխանակման պայմանավորվածություն:

Երկու կողմերն էլ ներկայացրել են զինադադարի պայմանները նկարագրող փաստաթղթեր եւ կարծիքներ են փոխանակել առաջնորդների հնարավոր գագաթնաժողովի վերաբերյալ: Նա նշել է, որ կողմերը համաձայնել են նաեւ բանակցությունների հաջորդ փուլի անհրաժեշտության շուրջ:

Ֆիդանը նշել է, որ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը պատրաստ է հյուրընկալել առաջնորդների հնարավոր հանդիպումը՝ ընդգծելով, որ Էրդողանը «միակ» առաջնորդն է, ում վստահում են բոլոր երեք կողմերը:

Նա նշել է, որ նախկին նախագահ Ջո Բայդենի օրոք Ուկրաինային ցուցաբերվող ԱՄՆ-ի օգնությունը շարունակվում է, բայց ակնկալվում է, որ կավարտվի մի քանի ամսից, որից հետո ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի որոշումները կարող են փոխել հակամարտության դինամիկան:

ՄՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԼԱՎ ԱՊՐԵԼՈՒ ԿՈՉ՝ ՓԱՇԻՆՅԱՆԻՑ ⇨

Մենք պետք է ընդլայնենք լավ ապրելու մասին մեր պատկերացումների շրջանակը եւ ճշգրտենք այդ շրջանակը: Ինչ է նշանակում լավ ապրել: Իհարկե, անհատական մակարդակով յուրաքանչյուր քաղաքացի, յուրաքանչյուր անհատ ինքն է որոշում՝ ինչ է նշանակում լավ ապրել: Դիոգենեսը, օրինակ, ապրում էր տակառի մեջ, որովհետեւ համարում էր, որ դա է կյանքի կատարյալ ձեւը:

Այս մասին ԱԺ մշտական հանձնաժողովների համատեղ նիստում՝ 2024-ի բյուջեի կատարողականի նախնական քննարկման ժամանակ հայտարարեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Նրա խոսքով՝ մենք պետք է ձեւակերպենք՝ ինչ է նշանակում լավ ապրել:

ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՍԿՍԵԼ Է ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հարավային Կորեայի նախագահ ընտրված լիբերալ Դեմոկրատական կուսակցության թեկնածու Լի Չե Մյոնը պաշտոնապես սկսել է իր 5-ամյա կառավարումը Ազգային ընտրական հանձնաժողովի կողմից նրա հաղթանակի հաստատումից հետո:

Լի Չե Մյոնը գործող նախագահ Լի Չու Հոյից ընդունել է ինչպես նախագահի պարտականությունները, այնպես էլ երկրի գլխավոր հրամանատարի:

Նա ընտրություններում հաղթանակ էր տարել՝ ստանալով ձայների 49,42%-ը՝ առաջ անցնելով իր պահպանողական մրցակից Կիմ Մուն Սուից, որը հավաքել էր քվեների 41,15%-ը:

Պաշտոնը ստանձնելուց հետո իր ելույթում Հարավային Կորեայի նոր նախագահը խոստացել է վերսկսել Հյուսիսային Կորեայի հետ բանակցությունները եւ ամրապնդել եռակողմ գործընկերությունն Ամերիկայի եւ Ճապոնիայի հետ:

Հարավային Կորայում արտահերթ ընտրություններ են անցկացվել, քանի որ Սահմանադրական դատարանը ապրիլի 4-ին պաշտոնանկ էր արել նախագահ Յուն Սոկ Յոլին: Նրա դեմ քրեական գործ է հարուցվել ապստամբության մեղադրանքով: Յուն Սոկ Յոլը 2024 թ. դեկտեմբերի 3-ի երեկոյան ռազմական դրություն էր հայտարարել՝ ընդդիմությանը մեղադրելով «հակապետական» գործողությունների միջոցով կառավարությունը «կաթվածահար անելու» մեջ: Ռազմական դրության հայտարարումից հետո բախումներ էին տեղի ունեցել:

ՀԱՐԿԵՐԸ ԲԱՐՁՐԱՑՐԵԼ Է

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը կարգադրություն է ստորագրել, որը կրկնակի բարձրացնում է երկիր ներմուծվող պողպատի եւ ալյումինի նկատմամբ մաքսատուրքերը: Նախկինում մաքսատուրքերը կազմում էին 25%, այժմ կկազմեն 50%: Այս մասին Դոնալդ Թրամփի անունից հայտարարություն է տարածել Սպիտակ տունը:

Նշվում է, որ ԱՄՆ պետքարտուղարի կատարած ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ պողպատը եւ ալյումինը Միացյալ Նահանգներ են ներմուծվում այնպիսի քանակությամբ, որ դա սպառնում է վտանգել երկրի ազգային անվտանգությունը:

50% մաքսատուրքերն ուժի մեջ կմտնեն Վաշինգտոնի ժամանակով հունիսի 4-ին:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՆԱԽԱԳԱՀԻՆ ՆՈՐԻՑ ՀԱՐՑԱՔՆՆԵԼ ԵՆ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ երեկ Արցախի նախագահ Սամվել Շահրամանյանը գտնվում էր ՀՀ քննչական կոմիտեում. նրան կրկին կանչել են հարցաքննության:

Վերջին մեկ ամսում նա 6-7 անգամ հրավիրվել է ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն՝ հարցաքննության:

ArmLur.am-ը տեղեկացավ նաեւ, որ Արցախի նախագահի գործը վերաբերում է Արցախի հանրապետության հանձնմանը, պատերազմի ժամանակ ցուցաբերած զինվորական պաշտոնեական անփութությանը, ինչպես նաեւ զենք-զինամթերք եւ սպառազինությունը թշնամուն հանձնելուն:

ArmLur.am-ը այս առիթով կապ էր հաստատել Շահրամանյանի փաստաբան Ռոման Երիցյանի հետ՝ պարզելու, թե ինչ մեղադրանքի շրջանակներում է հարցաքննվել Արցախի նախագահը, եւ ինչ սպասել այդ ինտենսիվ հարցաքննությունից: Փաստաբանը հրաժարվեց խոսել գործի մանրամասներից եւ պատասխանել հարցերին՝ միայն տեղեկացնելով, որ Սամվել Շահրամանյանին որեւէ մեղադրանք չի առաջադրվել եւ նա հարցաքննվում է վկայի դատավարական կարգավիճակով: Հիշեցնենք, որ ArmLur.am-ը իրավապահ համակարգին մոտ կանգնած իր աղբյուրներից պարզել էր, որ վերը հիշատակված քրեական վարույթի շրջանակներում հարցաքննվել են նաեւ այլ անձինք՝ այդ թվում եւ Արցախի նախկին պաշտպանության նախարար Սամվել Բաբայանը. ու սա ենթադրել է տալիս, որ գուցե հենց նրա դիմումի հիման վրա էլ հարուցվել է վարույթը, որի շրջանակներում 5-6 անգամ արդեն Արցախի նախագահը հրավիրվել է քննչական կոմիտե:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԸ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ ԵՆ

Մայիսի 31-ին՝ ժամը 1:50-ի սահմաններում, ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն հիվանդանոցից հաղորդում էր ստացվել, որ շտապօգնության խումբը Երեւանի Ռիգայի փողոցի մի տնից գլխի վնասվածքով բուժօգնության է տեղափոխել 32-ամյա օտարերկրացու: Մինչ այդ ահազանգ էր ստացվել նաեւ նշված տան սեփականատիրոջից:

Համայնքային ոստիկանության Արաբկիրի բաժնի ծառայողները ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզել են, որ անհայտ անձինք մուտք են գործել նշված տուն, ծեծի ենթարկել վարձակալությամբ բնակվող օտարերկրացի երիտասարդներին եւ զենքի գործադրմամբ պահանջել կրիպտոարժույթ:

Ավազակության հատկանիշներով քրեական վարույթ է նախաձեռնվել:

Երեւան քաղաքի քրեական ոստիկանության եւ Համայնքային ոստիկանության Արաբկիրի բաժնի ծառայողները վնասազերծել, ավազակություն կատարելու կասկածանքով ձերբակալել են օտարերկրյա քաղաքացի 31 եւ 35 տարեկան երկու տղամարդու: Նրանք տեղափոխվել են ձերբակալվածների պահման վայր:

Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

Ծանուցում. Ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ԳՈՒՅՔ ԲՌՆԱԳԱՆՁԵԼՈՒ ՊԱՀԱՆՋ

Հակակոռուպցիոն դատարանը վարույթ է ընդունել Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հերթական հայցադիմումը: Այս մասին տեղեկացնում է ՀՀ գլխավոր դատախազությունը:

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի համալիր հարկային ստուգումների վարչության պետի նախկին տեղակալ Հայկազ Յուրիկի Մկրտչյանից եւ վերջինիս փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

Երեւան քաղաքում գտնվող 2 անշարժ գույք.

1 շարժական գույք.

1 իրավաբանական անձում մասնակցության իրավունք.

1 գնման իրավունք.

38 միլիոն 118 հազար դրամ՝ որպես ապօրինի եկամուտների եւ միջոցների մնացորդ.

5 միլիոն 255 հազար դրամ, որը չի հիմնավորվում անձի օրինական եկամուտներով, ունի ապօրինի ծագում, 2004-2023 թվականների ընթացքում փոխանցվել է բարեխիղճ ձեռք բերողի կամ հնարավոր չէ նույնականացնել եւ բռնագանձել՝ հիմք ընդունելով «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորումը:

ԹՄՐԱՆՅՈՒԹ ԵՆ ԳՏԵԼ

Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի օպերատիվ վարչության «Աբովյան» բաժանմունքի ծառայողները, իրացնելով կենտրոնական մարմնի օպերատիվ վարչությունից ստացված տեղեկությունները, զննության են ենթարկել քաղաքացի Ա.Ղ.-ի կողմից «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի կալանավորված անձին բերված հանձնուքը:

Հանձնուքում առկա վերնազգեստի վրա ծառայողները նկատել են թմրամիջոցի նմանվող, կասկածելի զանգված՝ սպիտակ, փոշենման հետքերով:

Քաղաքացի Ա. Ղ.-ն նույնպես ենթարկվել է խուզարկության, եւ նրա հագին եղած ներքնաշապիկի վրա եւս առկա է եղել թմրանյութի նմանվող, սպիտակ, փոշենման զանգված:

Ա.Ղ.-ն ձերբակալվել է օպերատիվ ծառայողների կողմից եւ ներկայացվել ՀՀ ՔԿ Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժին:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԾԵԾԿՌՏՈՒՔ՝ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Մայիսի 29-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Լոռու մարզում: Ժամը 09:35-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Թումանյանի բաժնում տեղեկություն է ստացվել, որ Օձունի ֆուտբոլի դաշտում անչափահասի են ծեծի ենթարկել:

Ոստիկանության Թումանյանի բաժնի ծառայողներին Լոռու մարզի բնակիչ 55-ամյա կինը հայտնել է, որ մայիսի 28-ին՝ ժամը 16:00-ից մինչեւ 19:30-ն ընկած ժամանակահատվածում, Լոռու մարզի բնակիչներ 11 եւ 9-ամյա եղբայրները Օձուն գյուղի ֆուտբոլի դաշտում անհիմն վիճաբանել են իր 12-ամյա որդու հետ, քաշքշել վերջինիս, պատռել հագին եղած հագուստը, գցել գետնին, ձեռքերով եւ ոտքերով հարվածներ հասցրել մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Ոստիկանության Թումանյանի բաժնի ծառայողների կողմից ձեռնարկվում են միջոցառումներ՝ եղբայրներին հայտնաբերելու համար:

Դեպքի փաստով ոստիկանության Թումանյանի բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք փոխանցվել են ՀՀ Քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության բաժին:

ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՎԵԼ ԵՆ

Բարձրագույն դատական խորհուրդը հունիսի 3-ին որոշում է կայացրել դադարեցնել Երեւանի քրեական դատարանի դատավոր Գագիկ Պողոսյանի լիազորությունները:

«Հիմք ընդունելով Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի նախագահի 19.05.2025 թվականի գրությունը, «Արմենիա հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրենի 02.06.2025 թվականի թիվ 25 գրությունը եւ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 159-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 89-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 94-րդ հոդվածի 1-ին մասով՝ Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է 2025 թվականի հունիսի 3-ից դադարեցնել Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Գագիկ Կոլյայի Պողոսյանի լիազորությունները:

Նշենք, որ Դատական օրենսգրքի 159-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, որին ԲԴԽ-ն հղում է կատարել Պողոսյանի լիազորությունները դադարեցնելու որոշման մեջ, սահմանում է, որ դատավորի լիազորությունները դադարեցվում են, եթե նա «ունի դատավորի պաշտոնում նշանակմանը, նշանակվելուց հետո պաշտոնավարմանը խոչընդոտող հիվանդություն կամ վիճակ, որի հետեւանքով այլեւս ի վիճակի չէ կատարելու դատավորի լիազորությունները կամ հրաժարվել է անցնել սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված պարտադիր բժշկական զննությունը»:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 3-ից 4-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 87 դեպք, որից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

«ԲԵՆՏՈՆԻՏ» ԿՈՄԲԻՆԱՏԸ ԴԱՏԵՐԻ ՄԵՋ է

Իջեւանի «Բենտոնիտ» կոմբինատը հիմնադրվել է 1967 թ.: Գործարանի հենքի վրա ստեղծվել է Ազատամուտ բանվորական ավանը, որն այժմ գյուղի կարգավիճակ ունի: Նախկինում «Բենտոնիտի» կոմբինատում աշխատում էին Ազատամուտի, Աչաջրի, Դիտավանի, Սարիգյուղի, Սեւքարի, Իջեւան քաղաքի հարյուրավոր բնակիչներ: Ադրբեջանի կողմից իրականացվող տրանսպորտային շրջափակման հետեւանքով գործարանն անգործության էր մատնվել, աշխատել կարճ ժամկետներով՝ բենտոնիտի փոշու հերթական խմբաքանակի պատվերի դեպքում: Գործարանի սեփականատերերի մի քանի փոփոխությունները նախկինում դրական արդյունք չեն տվել: Կոմբինատի ներկայիս սեփականատերերը Ռուսաստանում բնակվող, Ջավախքից բանաստեղծ Օքրո Օքրոյանի որդիներն են: Նրանց կողմից կոմբինատում վերակառուցման որոշ աշխատանքներ են կատարվել, նոր սարքավորումներով հոսքագիծ է գործարկվել: Սակայն փոքր հզորությամբ գործող ձեռնարկությունը պարբերաբար հայտնվում է ֆինանսական խնդիրների եւ դատական գործընթացների մեջ: Արսեն Միքայելի Հարությունյանը հայցադիմում է ներկայացրել ընդդեմ «Իջեւանի Բենտոնիտ Կոմբինատ» ԲԲԸ ընկերության եւ խնդրել՝անվավեր ճանաչել 2021թ. հուլիսի 7-ին կայացած «Իջեւանի Բենտոնիտ Կոմբինատ» ԲԲԸ ժողովի բաժնետոմսերի կոնսոլիդացիայի որոշումը, անվավեր ճանաչել 2021թ. հուլիսի 8-ին կայացած «Իջեւանի Բենտոնիտ Կոմբինատ» ԲԲԸ ժողովի բաժնետոմսերի հետգնման որոշումը, որպես հետեւանք՝ վերականգնել Արսեն Հարությունյանի սեփականության իրավունքը «Իջեւանի Բենտոնիտ Կոմբինատ» ԲԲԸ թվով 2404 հատ յուրաքանչյուրը 7237 ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ անվանական բաժնետոմսերի նկատմամբ: 2022թ. փետրվարին 11-ին հայցը ընդունվել է Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի վարույթ: Այդ գործով Դիլիջան քաղաքում նախնական դատական նիստեր են կայացել: Դատարանը մերժել է Արսեն Հարությանյանի ներկայացուցչի միջնորդությունը՝հայցի ապահովման միջոց կիրառելու մասին: 2024թ. մարտի 7-ին Դիլիջանում Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Նանա Դալլաքյանը վճռել է Ա. Հարությունյանի՝ ընդդեմ ՀՀ «Իջեւանի բենտոնիտ կոմբինատ» ԲԲԸ ժողովի որոշումները մասնակի անվավեր ճանաչելու եւ անվավերության հետեւանքներ կիրառելու պահանջի մասին հայցը մերժել: Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2024 թվականի հոկտեմբերի 17-ի որոշմամբ՝ Ա. Հարությունյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2024 թ., մարտի 7-ի վճիռը բեկանվել է, եւ գործն ուղարկվել է նույն դատարան՝ Վերաքննիչ դատարանի սահմանած ծավալով նոր քննության: Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Նարինե Անանյանը որոշել է սույն գործով նախնական դատական նիստ նշանակել 2025թ. հունիսի 5-ը, Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Իջեւանի նստավայրում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԻՆՉ է ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ «ՎԵՈԼԻԱ»-Ն

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ՝ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԵՐԻՑ

Օրերս ArmLur.am լրատվական էին ահազանգել Արմավիրի մարզի Փարաքար խոշորացված համայնքի Թաիրով բնակավայրի բնակիչները, եւ հայտնում էին, որ շուրջ մեկ ամիս է, ինչ նրանք զրկված են մաքուր խմելու ջրից:

Ահազանգի հետքերով՝ ArmLur.am-ն այցելել էր Թաիրով համայնք՝ զրուցելու բնակիչների հետ՝ առավել մանրամասն խնդրին տեղեկանալու համար: ArmLur.am-ի հետ զրույցի ժամանակ բնակիչները շեշտում էին, որ ջրավազաններին տրամադրելու նպատակով են ամռանը փոխում ջրերը:

Նրանք նաեւ նշեցին, որ խնդիրն առաջացել է «Վեոլիա Ջուր» ընկերությունից օգտվելուց հետո:

Տեղի ունեցածի վերաբերյալ «Վեոլիա Ջուր» ընկերությունը հանդես է եկել պարզաբանմամբ. «Տարիներ շարունակ ամռան ամիսներին Փարաքար խոշորացված համայնքի Թաիրով համայնքի ջրամատակարարումն իրականացվել է Արարատյան խորքային հորերից:

2017 թ.-ի հունվարից «Վեոլիա Ջուր» ընկերությունը, ստանձնելով ՀՀ ողջ տարածքի ջրամատակարարումը, որոշակի տեխնիկական լուծումներ տալով՝ փորձել է բարելավել տվյալ եւ հարակից տարածքների ջրամատակարարումը եւ սկսել է այստեղ իրականացնել ջրամատակարարում Գառնու, Արզականի աղբյուրներից, որոնք իրենց զգայորոշական ցուցանիշներով տարբերվում են խորքային հորերի ջրերի որակական ցուցանիշներից:

Ամռան ամիսներին, շոգ եղանակով, ջրապահանջի ծավալների աճով պայմանավորված՝ մեծանում է ջրասպառումը, եւ Գառնու, Արզականի աղբյուրների ջուրը ուղղակիորեն չի բավականացնում տվյալ տարածքի ջրամատակարարումն ապահովելու համար, ուստի որոշ բնակավայրերում ջրամատակարարումն իրականացվում է Արարատյան խորքային հորերից:

Ճիշտ է, վերջիններիս ջրի որակն իր զգայորոշական եւ ֆիզիկաքիմիական հատկություններով զիջում է լեռնային աղբյուրների ջրին, սակայն միանգամայն համապատասխանում է սանիտարական կանոնների եւ նորմերի պահանջներն:

Ամռան վերջին, ջրասպառման ծավալների կրճատմանը զուգահեռ՝նորից անցում է կատարվում Գառնու, Արզականի ջրաղբյուրներով ջրամատակարարմանը: Տեղեկացնում ենք նաեւ, որ այս ժամանակահատվածում եւս առաջին իսկ հնարավորության դեպքում Արարատյան ջրաղբյուրին պարբերաբար ավելացվում է Գառնու, Արզականի աղբյուրի ջրերից:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի համար խմելու ջրի որակը առաջնային խնդիրներից մեկն է, եւ հնարավոր ամեն քայլ ձեռնարկվում է այն ՀՀ-ում գործող սանիտարական նորմերի եւ կանոնների պահանջներին համապատասխան պահելու համար»:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ ԷԻՆ ԲԱՔՈՒ ԿԱՏԱՐԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԹՌԻՉՔՆԵՐԸ ⇨

2025 թվականի հունվարից մինչեւ հունիսը երկու պետական թռիչք է իրականացվել Երեւանից դեպի Բաքու եւ հակառակ ուղղությամբ:

Այս մասին, ի պատասխան գրավոր հարցման, հայտնել են Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունից:

«2025 թվականի ընթացքում մինչ օրս Երեւան-Բաքու եւ հակառակ ուղղությամբ իրականացվել են 2 պետական չվերթ՝ տարբեր ժամանակահատվածներում օտարերկրյա պաշտոնատար անձանց տեղափոխման նպատակով՝ Բաքու-Երեւան ուղղությամբ մեկ պետական չվերթ եւ Երեւան-Բաքու ուղղությամբ մեկ պետական չվերթ», - ասված է պատասխան նամակում:

Տարածքային կառավարման նախարարությունից նաեւ նշել են, որ այդ թռիչքների մասին լրացուցիչ տեղեկություններ չունեն, քանի որ պետական թռիչքների թույլտվությունները տրամադրում է Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը:

ՈՐ ՓՈՂՈՑՆԵՐՆ ԵՆ ՓԱԿ ԳԻՆՈՒ ՏՈՆԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Երեւանի քաղաքապետարանից տեղեկացնում են, որ «Երեւանի գինու օրերը» փառատոնն անցկացնելու նպատակով հունիսի 6-ին, 7-ին եւ 8-ին՝ ժ.16.00-22.30-ը, բոլոր տեսակի մեքենաների երթեւեկության համար փակ կլինեն Սարյան-Եկմալյան փողոցների խաչմերուկից մինչեւ Սարյան-Պուշկինի փողոցների խաչմերուկ, Պուշկինի-Սարյան փողոցների խաչմերուկից դեպի Սարյան-Մոսկովյան փողոցների խաչմերուկ, Մոսկովյան-Թումանյան փողոցների խաչմերուկից դեպի Սպենդիարյան-Մոսկովյան փողոցների խաչմերուկ, Սպենդիարյան-Մոսկովյան փողոցների խաչմերուկից դեպի Մոսկովյան-Զորյան փողոցների խաչմերուկ, Սարյան-Թումանյան փողոցների խաչմերուկից դեպի Թումանյան-Փարպեցու փողոցների խաչմերուկ ընկած հատվածները:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 14 պատահար. 1 մարդ զոհվել է, 20-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են«Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը՝

- Կոտայքի մարզ, համայնք Ձրվեժ, գյուղ Զորաղբյուր, Ազատության փողոց, 56 հասցեում գտնվող 324,92 քմ բնակելի տուն, 3,12 քմկաթսայատուն, 3,38 քմ հավաբուն, 43,64 քմ անասնաշենք, 24,86 քմավտոտնակ, 10.54 քմ թոնրատուն, 20,34 քմ շինություն, 26,16 քմ /39,24 խմ/ պարիսպ եւ 0,15 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 67600000ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Ավան, Ավան-Առինջ թաղամաս, 2-րդ միկրոշրջան, 2/5 շենք, 27 հասցեում գտնվող 73,45 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 34600000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 23.06.2025թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուրաշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 23.07.2025թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ-մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբսահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամբանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտէ ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝կանոնադրությունը,իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը,ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչիեւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով:Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է ԱՆՎՃԱՐ ԾՐԱԳԻՐԸ

«Ակբա բանկը» եւ Գերմանիայի բնության պահպանության միության (NABU) հայաստանյան մասնաճյուղը մեկնարկում են «Օրգանական գյուղատնտեսության զարգացման» 2025թ. անվճար ծրագիրը:

Հայտարարված մրցույթի շրջանակում հաղթող ճանաչված կազմակերպությունները, ֆերմերներն ու գյուղատնտեսները կկարողանան «Ակբա» բանկի եւ NABU հայաստանյան մասնաճյուղի համատեղ ֆինանսական եւ տեխնիկական աջակցության միջոցով ստանալ օրգանական սնունդ արտադրողի հավաստագրում եւ անհամեմատ մեծացնել արտադրանքի արտահանման հեռանկարները:

«Օրգանական գյուղատնտեսության զարգացման» ծրագրի 2025թ. մրցույթին մասնակցելու համար հետաքրքրված տնտեսվարողները կարող են մինչեւ սույն թվականի հունիսի 15-ը ներառյալ լրացնել դիմում-հայտը:

Ծրագրին կարող են դիմել այն տնտեսվարողները, ովքեր իրականացնում են օրգանական սննդի արտադրություն կամ պատրաստ են անցնել վերջինիս:

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել (+374) 44 599949 հեռախոսահամարին:

Հայաստանում օրգանական գյուղատնտեսության զարգացումը խթանելու եւ ոլորտի արտադրողներին օժանդակելու նպատակով 2015թ.-ից մեկնարկել է «Ակբա» բանկի եւ Գերմանիայի բնության պահպանության միության(NABU) հայաստանյան մասնաճյուղի համատեղ«Օրգանական գյուղատնտեսական զարգացման» անվճար ծրագիրը:

Միայն հայկական սերտիֆիկացման համար կտրամադրվի պահանջվող ֆինանսավորման կեսը, իսկ բոլոր տեսակի օրգանական սերտիֆիկացումների համար տրամադրվելիք աջակցության առավելագույն չափը կկազմի 400,000 դրամ: Սերտիֆիկացման ընդհանուր արժեքի մնացած մասը պետք է հոգա շահառուն:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ». ՎԵՐԱԲԱՑԵԼ Է «ՍԻՍԻԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ

Սիսիան քաղաքում՝ ավելի ընդարձակ ու ժամանակակից տարածքում, իր աշխատանքն է վերսկսել «Յունիբանկի» մասնաճյուղը: Այն գտնվում է ք. Սիսիան, Իսրայելյան փողոց 6/2 հասցեում:

Մասնաճյուղում ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմանները՝ ինչպես անհատ, այնպես էլ կորպորատիվ հաճախորդների արագ եւ հարմարավետ սպասարկման համար:

«Ուրախ ենք ողջունել մեր հաճախորդներին վերաբացված մասնաճյուղում: Մենք ձգտում ենք մոտ լինել մեր հաճախորդներին եւ ապահովել սպասարկման հաճելի պայմաններ՝ տրամադրելով բանկային բոլոր ծառայությունները»,- նշեց «Սիսիան» մասնաճյուղի կառավարիչ Գրիշա Ստեփանյանը:

Մասնաճյուղը մատուցում է բանկային ծառայությունների ամբողջական փաթեթ՝ սպառողական եւ բիզնես վարկերի տրամադրում, ավանդների եւ հաշիվների բացում, միջազգային դրամական փոխանցումներ, այդ թվում՝ UBPay համակարգի միջոցով, ներդրումային գործիքներ, բազմարժութային բանկային քարտեր եւ այլն:

Մասնաճյուղում տեղադրված է ինքնասպասարկման տերմինալ եւ հերթերի կառավարման համակարգ՝ հաճախորդների ժամանակը խնայելու համար:

«Մենք կշարունակենք ներդրումներ կատարել ենթակառուցվածքների զարգացման եւ սպասարկման կատարելագործման մեջ, որպեսզի մեր հաճախորդները ստանան առավել հարմարավետ եւ ժամանակակից բանկային ծառայություններ: «Յունիբանկը» նախատեսում է մասնաճյուղային ցանցի փուլային արդիականացում ամբողջ Հայաստանում: Մասնաճյուղային ցանցի ընդլայնմանը զուգընթաց՝ «Յունիբանկը» ակտիվորեն զարգացնում է թվային ծառայությունները՝ ստեղծելով սպասարկման համապարփակ համակարգ, որը յուրաքանչյուր հաճախորդի հնարավորություն է տալիս ընտրելու բանկի հետ փոխգործակցության իրեն ամենահարմար ձեւը՝ մասնաճյուղում կամ մոբայլ հավելվածների միջոցով», - ասաց «Յունիբանկի» մասնաճյուղային ցանցի տնօրեն Արսեն Պողոսյանը:

«ԻԴՐԱՄ». ԱՅՑԵԼԵԼ ԵՆ «ՀԵՐՈՍՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔ»

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, ընթացիկ տարվա մարտին «Մի դրամի ուժի» շահառուն կրկին «Հերոսների վերականգնողական քաղաք» հոգեկան առողջության կենտրոնն էր, իսկ հավաքագրված գումարը կազմել էր 5.237.825 ՀՀ դրամ:

Եվ ահա համագործակցության ամփոփիչ միջոցառման շրջանակում IDBank-ի եւ «Իդրամի» թիմը Պռոշյան գյուղում է, որտեղ իր խաղաղ ու լուսավոր հանգրվանն է գտել «Հերոսների վերականգնողական քաղաք» հոգեկան առողջության կենտրոնը:

Հիշեցնենք, որ կենտրոնի գործունեությունն ուղղված է պատերազմի մասնակից անձանց եւ նրանց ընտանիքների անդամների հոգեկան, սոցիալական վերականգնմանն ու բարելավմանը, ուստի երկրորդ անգամ «Հերոսների վերականգնողական քաղաքի» ու «Մի դրամի ուժի» համագործակցությունը վկայում է, որ մեր հայրենիքի պաշտպանների բարօրությունը անչափ կարեւոր է մեր հասարակության համար:

Այցի մանրամասներն ու հիշարժան օրվա գեղեցիկ ակնթարթները հրապարակված են ռեպորտաժում:

«Մի դրամի ուժի» բարի գործերին մասնակից դառնալու համար ընդամենը Ձեր բոլոր վճարումները կատարեք Idram&IDBank հավելվածով, IDBanking.am եւ banking.idram.am առցանց հարթակներով, «Իդրամի» եւ IDBank-ի տերմինալներով, եւ Ձեր յուրաքանչյուր վճարման դիմաց ընկերությունները մեկ դրամ կուղղեն կարեւոր ծրագրերին:

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ ԵՆ ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ «ՎԱԶԳԵՆ. ՎԵՐՋԻՆ ՍՊԱՐԱՊԵՏԸ» ՖԻԼՄԻՆ

ՊԱՏՄԵԼ Է ՀԻԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Մարտին մեծ էկրաններ բարձրացավ Genetic Production-ի «Վազգեն. վերջին Սպարապետը» ֆիլմը, որը նվիրված է սպարապետի կյանքին, դժվարություններին եւ այն կողմերին, որոնք միչ բացահայտված են եղել հանրությանը:

Ֆիլմի պրոդյուսերը նրա զարմուհին՝ Նոնո Սարգսյանն է, իսկ վերջին կադրերում հանդիսատեսը տեսնում է նաեւ Վազգեն Սարգսյանի եղբորորդուն՝ Կառլեն Սարգսյանին: Ֆիլմում մի շարք դրվագներ հյուսված են Վազգենի ու Կառլենի մտերմության, նրանց երկխոսությունների շուրջ:

Կառլենը խոստովանել է, որ ի սկզբանե, չէր ցանկանում նկարահանվել, քույրը՝ Նոնոն է համոզել: «Զանգահարեց ու ասաց՝ «Եթե դու չնկարահանվես, ես քեզ չեմ ների»: Բայց իմ մտքով անգամ չէր անցնի, որ ես ֆիլմում պետք է նկարահանվեմ: Հետո ինքս մտածեցի, որ արժե դա անել, քանի որ դա հորեղբորս նվիրված ֆիլմն է»:

Կառլենը ֆիլմի մասին շատ արձագանքներ է լսել, ասում է՝ «Այն շատ սպասված էր ու, երեւի, ավելի շուտ պետք է նկարահանվեր»:

Նրա խոսքով՝ ազգականներն ու ընկերները շատ չեն զարմացել ֆիլմում իր ներկայությունից, քանի որ տեղյակ էին այդ մասին: «Կարծում եմ՝ խորհրդանշական է նաեւ Նոնոյի այնտեղ լինելը. նա, ասես, կյանք է տալիս ֆիլմին»:

Վերհիշելով հորեղբոր հետ անցկացրած մանկությունն ու իրենց երկխոսությունները՝ Կառլեն Սարգսյանը պատմում է. «Իմ կյանքի ամենամեծ երազանքը եղել է այն, որ ես նրա թիկնապահը դառնամ. ես նրան միշտ ասում էի, որ երբ մեծանամ, ուզում եմ՝ իր անձնական թիկնապահը դառնամ: Բայց այնպես չէ, որ ես երազում էի թիկնապահ դառնալու մասին, ես միայն իրեն էի ուզում պաշտպանել: Նրա հետ շատ տեղերում եմ եղել՝ միասին գնացել ենք Արցախ, իր հետ եղել եմ դիրքերում: Ես երեխա էի այն ժամանակ, ու գնում էի իր հետ ամենուր, ու գիտեի, որ հաջորդ օրն էլ միասին ֆուտբոլ ենք խաղալու: Եթե ժամանակ չէր լինում խաղերի համար, պարզապես իր հետ գնում էի պաշտպանության նախարարություն»:

Հարցին՝ որքանո՞վ է հորեղբոր հետ շփումն ազդել իր բնավորության ձեւավորման վրա, Կառլենը պատասխանեց.

«Կդժվարանամ ասել՝ արդյոք նրա հետ շփումն ազդե՞լ է իմ բնավորության ձեւավորման վրա, որովհետեւ փոքր եմ եղել. դա կարող են կողքից ասել, բայց կարծում եմ՝ նմանություններ կունենանք, երբեմն, նույնիսկ, դեմքով են նմանեցնում: Բնավորության գծերից էլ նմանություններ կլինեն, բայց, գլոբալ առումով, կարծում եմ՝ ինքը բոլորից ավելի հզոր էր ու ուժեղ:

Կարծում եմ՝ նրա բնավորության ամենանուրբ կողմերը բացահայտված են հենց ֆիլմում: Սիրում էր երգել: Հիշում եմ՝ մի անգամ առիթի ժամանակ ասաց՝ միասին երգենք. բայց, իհարկե, ինքը լավ էր երգում, ես՝ ոչ, էդպես հումորային պահ ստացվեց:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԻՏՐՈՎԻՉԸ ԿԱՐՈՂ Է ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ԱՊԼ

Սաուդյան Արաբիայի «Ալ-Հիլալ» ակումբի կենտրոնական հարձակվող Ալեքսանդր Միտրովիչը կարող է վերադառնալ Մառախլապատ Ալբիոն:

Այս մասին հաղորդում է Talksport-ը:

Աղբյուրի համաձայն՝ սերբ հարձակվողի ծառայություններով հետաքրքրված է «Մանչեսթեր Յունայթեդը»: 30-ամյա հարձակվողի տրանսֆերային արժեքը կազմում է 18 միլիոն եվրո:

Ինսայդեր Բեն Ջեյքոբսը իր հերթին հայտնում է, որ «Միլանը» եւս հետաքրքրված է ֆուտբոլիստի ծառայություններով: 2024/2025 մրցաշրջանում Միտրովիչը մասնակցել է 23 հանդիպման: Ալեքսանդրը խփել է 20 գոլ (երեքը՝ 11 մետրանոցից) եւ կատարել երկու գոլային փոխանցում:

ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾ Է

Անգլիական «Մանչեսթեր Սիթին» հետաքրքրություն է ցուցաբերում «Վուլվերհեմփթոնի» 23-ամյա պաշտպան Ռայան Աիտ-Նուրիի նկատմամբ: Այս մասին հայտնել է լրագրող Բեն Ջեյքոբսը:

Աղբյուրի փոխանցմամբ՝ «քաղաքաբնակների» ղեկավարությունը լավատեսորեն է տրամադրված, չնայած այն հանգամանքին, որ «Վուլվսում» կնախընտրեին, որ Աիտ-Նուրին նոր պայմանագիր կնքեր եւ մնար ակումբում:

Հաղորդվում է, որ «Մանչեսթեր Սիթին» տրանսֆերը գնահատում է 35-40 միլիոն եվրո: «Վուլվսը» ցանկանում է ստանալ մոտ 60 միլիոն եվրո: Անցած մրցաշրջանում Աիտ-Նուրին մասնակցել է բոլոր մրցաշարերի 41 հանդիպման, որոնցում խփել է հինգ գոլ եւ կատարել 7 գոլային փոխանցում:

ԱՎԱԳԸ ԲԱՑԱՏՐԵԼ Է

«Մանչեսթեր Յունայթեդի» ավագ Բրունո Ֆերնանդեշը բացատրել է, թե ինչու է հրաժարվել «Ալ-Հիլալ» տեղափոխվելուց: Հիշեցնենք, որ սաուդյան ակումբը պորտուգալացուն առաջարկել է չորս տարվա պայմանագիր: Այս ընթացքում փորձառու կիսապաշտպանը կարող էր 200 միլիոն եվրո վաստակել:

«Ես լավ հնարավորություն ունեի: Ակումբի նախագահը զանգահարեց ինձ եւ հարցրեց, թե արդյոք ցանկանում եմ հեռանալ: Ակումբները սպասում էին իմ պատասխանին: Ես խոսեցի մարզիչ Ամորիմի հետ, նա խնդրեց ինձ մնալ: «Մանչեսթեր Յունայթեդը» չէր ուզում վաճառել ինձ, նրանց փող պետք չէ: Ակումբը կվաճառեր իմ տրանսֆերը, եթե ցանկանար:

«Ալ-Հիլալը» շատ բարի էր ինձ հետ: Ակումբը խոսեց իմ գործակալի հետ: Հետո ես խոսեցի կնոջս հետ: Նա միշտ աջակցում է իմ որոշումներին, ուստի հարցրեց, թե ինչ եմ անելու: Ինձ համար հեշտ կլիներ տեղափոխվել Սաուդյան Արաբիա, քանի որ ես ճանաչում եմ այնտեղ հանդես եկող շատ պորտուգալացի ֆուտբոլիստների: Այնուամենայնիվ, ես ուզում եմ հանդես գալ ամենաբարձր մակարդակով եւ պայքարել ամենահեղինակավոր գավաթների համար: Ես կարող եմ դա անել եւ դեռ ուզում եմ: Ես ունեմ կիրք», - Ֆերնանդեշի խոսքերն է մեջբերում լրագրող Ֆլորիան Պլետենբերգը:

ԺԱՄԱՆՑ

ԻՆՉ Է ԽՈՍՏՈՎԱՆԵԼ MrBeast–Ը

Հայտնի յություբեր MrBeast-ը, որի իրական անունը Ջիմի Դոնալդսոն է, բացահայտել է, որ մորից գումար է վերցնում Թեա Բոյսենի հետ իր առաջիկա հարսանիքի համար՝ չնայած իր մոտավոր 1 միլիարդ դոլար կարողությանը:

Պատասխանելով X սոցիալական ցանցի երկրպագուի հարցին, որը նրան անվանել էր «30 տարեկանից փոքր միակ միլիարդատերը, ով չի ժառանգել իր կարողությունը», Ջիմմին գրել է. «Ես անձամբ շատ քիչ կանխիկ գումար ունեմ, քանի որ ամեն ինչ վերաներդնում եմ (կարծում եմ՝ այս տարի մենք մոտ մեկ քառորդ միլիարդ ենք ծախսում բովանդակության վրա)»:

«Իրոնիան այն է, որ ես իրականում գումար եմ վերցնում մորիցս՝ իմ հարսանիքը վճարելու համար, լոլ», - հավելել է 27-ամյա Դոնալդսոնը: «Բայց այո, իմ սեփական բիզնեսները թղթի վրա շատ արժեք ունեն»: MrBeast-ը հայտնի դարձավ իր անհավանական մարտահրավերներով եւ մեծածավալ նվերներով, այդ թվում՝ շքեղ նվերներով, մեքենաներով: 2024 թվականի դեկտեմբերին նա ընդլայնեց իր լսարանը՝ Prime Video-ում թողարկելով Beast Games շոուի առաջին եթերաշրջանը:

Մրցույթը գրավեց 1000 մասնակից, եւ հաղթողը ստացավ 10 միլիոն դոլար: Շոուն արագորեն հավաքեց 50 միլիոն դիտում 25 օրվա ընթացքում եւ արդեն երկարաձգվել է երկու եթերաշրջանով:

YouTube-ից բացի, Դոնալդսոնը տիրապետում է շոկոլադի եւ խորտիկների Feastables ապրանքանիշին, ինչպես նաեւ MrBeast Lab խաղալիքների շարքին:

Ջիմմիի անձնական կյանքը նույնպես լուրերում է. նա սկսել է հանդիպել Թեա Բոյսենի (27) հետ 2022 թվականին: Զույգը պաշտոնապես հայտարարել է իրենց սիրավեպի մասին Kids' Choice Awards-ում նույն թվականի ապրիլին, իսկ ամուսնության առաջարկը արվել է 2024 թվականի Սուրբ Ծննդյան տոներին:

Զույգը պլանավորում է փոքրիկ արարողություն կղզում: «Մենք չենք ուզում մեծ, շքեղ հարսանիք ունենալ», - ասում է Թեան: «Այն կլինի գեղեցիկ, բայց շատ հարմարավետ՝ մտերիմ ընտանիքի եւ ընկերների հետ»:

ԵՐԿՐՊԱԳՈՒՆԵՐԸ ՀԻԱՑԱԾ ԵՆ

«Բարբի»-ի հաղթանակից երկու տարի անց կինովարձույթում եւ Օսկարում, Մարգո Ռոբին վերադառնում է մեծ էկրան՝ կրկին հզոր նախագծով: Sony Pictures-ը ներկայացրել է «Մեծ համարձակ գեղեցիկ ճանապարհորդություն» ֆիլմի առաջին թրեյլերը, որն արդեն անվանում են «տարվա ֆիլմ»:

Դրամայի տարրերով ռոմանտիկ ֆանտաստիկ ֆիլմում գլխավոր դերերը խաղացել են Ռոբին եւ Քոլին Ֆարելը: Ռեժիսորը «Կոգոնադան» էր («Յանգից հետո»), իսկ սցենարը՝ Սեթ Ռեյսը («Մենյու»):

Սյուժեն պատմում է երկու անծանոթների՝ Սառայի (Ռոբբի) եւ Դեյվիդի (Ֆարել) մասին, որոնք պատահաբար հանդիպում են արձակուրդում: Շուտով նրանք անտառում գտնում են մի խորհրդավոր դուռ, որը պարզվում է, որ նրանց անցյալի դարպասն է: Միասին նրանք ապրում են իրենց կյանքի կարեւոր հիշողությունները՝ Դեյվիդի առաջին անպատասխան սերը եւ Սառայի մոր մահը: «Կարեւոր չէ, թե ով ես եղել կյանքումդ: Գլխավորն այն է, թե ում հետ ես կիսվել դրանով», - ասում է Ֆարելի կերպարը թրեյլերի վերջում:

Ֆիլմի համաշխարհային պրեմիերան կկայանա 2025 թվականի սեպտեմբերի 19-ին:

Թրեյլերը անմիջապես հույզերի փոթորիկ առաջացրեց հեռուստադիտողների շրջանում: Sony Pictures YouTube ալիքում մեկնաբանություններից մեկն արդեն վիրուսային է դարձել.

«Այս թրեյլերը նման է այն բանի կարոտին, որը ես երբեք չեմ զգացել», - գրել է @aaryanveer1894-ը:

Երկրպագուները հատկապես գովաբանում են տեսողական ոճը, երազանքների եւ հիշողությունների մթնոլորտը, ինչպես նաեւ Ռոբիի եւ Ֆարելի զույգը, որը նրանք անվանում են «կախարդական»:

● *Հունիսի 7-ին՝ 12:00-ին, Հովհաննես Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում տեղի կունենա «Ծուղ-րու-ղու» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1400-2000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ պարտավորություն ունի նպատակային ուսուցմամբ (պայմանագրային հիմունքներով գործուղված) ուսանողը:

Կանրինե Մելքոնյան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Նպատակային ուսուցմամբ ուսանող համարվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար պետությունը երաշխավորում է պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում մրցութային կարգով անվճար բարձրագույն եւ հետբուհական կրթություն ստանալու իրավունք: Այս դեպքում մրցութային ընդունելությունն իրականացվում է ընդհանուր մրցույթից առանձնացված՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված կարգի: Նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողի հետ կնքված պայմանագրում պարտադիր ամրագրվում է նաեւ հետեւյալ պայմանը. ուսանողը ավարտելուց հետո առնվազն 3 տարի ժամկետով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով գործուղվում է աշխատելու ուղեգրող կազմակերպության նախատեսած վայրերում:

Այս պայմանը չկատարելու դեպքում շրջանավարտը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով եւ ժամկետներում պարտավոր է փոխհատուցել ուսումնառության տարիների համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրված ուսանողական նպաստի ձեւով ուսման վճարի լրիվ փոխհատուցման չափի եւ պետական կրթաթոշակի չափի հանրագումարի կրկնապատիկը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ուսանողի տեղափոխությունը թույլատրվում է, եթե տեղափոխման պահին ուսումնառած ծրագրի եւ ընդունող ծրագրի բովանդակությունների տարբերությամբ պայմանավորված՝ առարկայական տարբերությունների թիվը չի գերազանցում 20 կրեդիտը, հակառակ պարագայում ուսանողին առաջարկվում է փոխադրվել ավելի ցածր կիսամյակում կամ այլ հարակից մասնագիտությամբ սովորելու, որի դեպքում առարկայական անհամապատասխանությունների նշված պահանջը բավարարվում է:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե որ օրվանից է նշանակվում կենսաթոշակը:

Աննա Եղիկյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ կենսաթոշակ նշանակվում է՝

կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալու օրվանից (բայց ոչ շուտ, քան կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու օրվանից), եթե կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացվել է այդ օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում,

բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչվելու օրվանից, եթե կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացվել է այդ օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում,

կերակրողի մահվան (օրենքով սահմանված դեպքում՝ անհայտ կորելու) օրվանից (բայց ոչ շուտ, քան կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու օրվանից), եթե կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացվել է կերակրողի մահվան (օրենքով սահմանված դեպքում՝ անհայտ կորելու) օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում,

զինծառայությունից արձակվելու օրվանից, եթե սահմանված կարգով զինվորական ծառայությունից արձակված զինծառայողը դիմել է այդ օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշված ժամկետներից հետո դիմելու դեպքում կենսաթոշակը նշանակվում է դիմելու օրվանից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Shamshyan.com-ի

Երեկ ավտովթար է տեղի ունեցել Սյունիքի մարզում: Երեւան-Մեղրի ավտոճանապարհին ճակատ ճակատի բախվել են Jeep Compass եւ Lexus մակնիշի ավտոմեքենաները:

Վթարի հետեւանքով 2 վարորդները տեղափոխվել են «Սիսիան» բժշկական կենտրոն, իսկ 1 ուղեւոր՝ ՀՀ ՊՆ Սիսանի զինվորական հոսպիտալ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+7 + 10 + 16+ 19
Կոտայքի լեռներ	+9 + 12 + 16+ 19
Կոտայքի նախալեռներ	+ 6 + 10 +16 + 18
Գեղարքունիք	+10+ 15 + 17+ 21
Լոռի	+ 6 + 10 +15 + 18
Տավուշ	+ 9 + 12 +18 + 22
Արագածոտնի լեռներ	+10 + 13 +19 + 22
Արագածոտնի նախալեռներ	+12 + 15 +18 + 24

Արարատ	+10 + 13 + 20+ 25
Արմավիր	+9 + 12 + 20+ 24
Վայոց ձորի լեռներ	+ 6 + 10 + 14+ 19
Վայոց ձորի նախալեռներ	+9 + 13 +19 + 24
Սյունիքի հովիտներ	+10+ 13 + 22+ 26
Սյունիքի նախալեռներ	+7 + 10 +16 + 19
ԼՂՀ	+ 6 + 9 +13 + 17
Երեւան	+9 + 11 +20 + 26

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **4.6.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*